

ՀԱՄՈՒՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԳՈՐԻՍԻ «ՍԱՍՈՒՆ» ՏՊԱՐԱՆԻ ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿԿՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

1908թ. Գորիսում Սասուն տպարանի ստեղծումը կարևոր ձեռքբերում էր տարածաշրջանի բնակիչների համար: Տպարանում տպագրվել են տարբեր ձևաթղթեր, ցուցանակներ, այցետոմսեր, կազմեր, կոչ-հայտարարությունների ու գործառնական զանազան նյութեր, ինչպես նաև գրքեր ու պարբերականներ: Հոդվածում վերլուծվում է «Սասուն» տպարանի կողմից 1909-1922 թվականներին հրատարակված 8 գիրք: Դրանք գեղարվեստական ստեղծագործություններ են (պատմվածքներ, պոեմներ, բանաստեղծություններ), երգարաններ, փաստաթղթեր, ցուցմունքներ եւ վերլուծություններ, որոնք արտացոլում են ինքնավար Սյունիքի ռազմաքաղաքական ու տնտեսական կացությունը: Մասնավորապես, տպարանում 1921թ. հրատարակված 3 գիրք արժեքավոր աղբյուրներ են Գարեգին Նժդեհի գլխավորությամբ Սյունիքի ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրման համար: Գորիսում հրատարակված գրքերն ու պարբերականները նպաստեցին Սյունիք-Չանգեզուրի շրջանում կրթական ու մշակութային կյանքի վերընթաց զարգացմանը եւ գրագիտության տարածմանը: Այս տեսանկյունից «Սասուն» տպարանը անգնահատելի դեր խաղաց:

Բանալի բառեր` տպարան, գիրք, պարբերական, պատմվածք, պոեմ, Գարեգին Նժդեհ, Սյունիք, Գորիս, «Սասուն»:

XIX-XX դարերի գրատպության պատմությունը հայ պատմագիտության թերի ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Ասվածն առավել քան վերաբերում է տեղական բնույթի տպարանների հրատարակություններին: Այս դեպքում մեր կողմից քննվող խնդիրը Գորիսի «Սասուն» տպարանի գրահրատարակչական գործունեությունն է: Մինչև բուն թեմային անցնելը համառոտ անդրադառնանք տպարանի հիմնադրմանը:

Չարմանալիորեն «Հայ գրատպություն և գրքարվեստ» հանրագիտարանում Գորիսի տպագրության (այդ թվում «Սասուն» տպարանի) մասին տեղեկություն չկա¹: Սա այն դեպքում, երբ 1900-ական թվականներից սկսած այստեղ հրատարակվել են մի շարք գրքեր ու պարբերականներ: Ս. Հախվերդյանի «Գորիսի ամփոփ պատմություն» աշխատությունում, առանց սկզբնաղբյուրի մատնանշման, «Սասուն» տպարանի հիմնադրման տարեթիվ է նշված 1903 թ.²: Տպարանի հիմնադրման նույն տարեթիվն է առկա նաև Ե. Չոհրաբյանի և Հ. Միրզոյանի հեղինակած «Գորիսի հանրագիտարան»-ում³: Գ. Ստեփանյանը, հիմք ընդունելով 1912 թ. Տիգրան Սազանդարյանի կողմից Գորիսից Շուշի

1 Տե՛ս Հայ գրատպություն և գրքարվեստ, հանրագիտարան, Երևան, 2015:

2 Հախվերդյան Ս. Գ., Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 201:

3 Չոհրաբյան Ե. Ն., Միրզոյան Հ. Ա., Գորիսի հանրագիտարան, Երևան, 2008, էջ 373:

«Ղարաբաղ» թերթին ուղարկած մի թղթակցությունում առկա տեղեկությունը, որ «1908 թվից քաղաքումս գոյություն ունի «Սասուն» տպարանը, պ.պ. Գևորգյանի և Փարսյանի, ուր տպագրվում են պետական հաստատությունների, դպրոցների և այլ պատվերները. տպագրվում են հայերեն, ռուսերեն և թուրքերեն լեզուներով»¹, տպագրության ընթացքում գտնվող իր «Սիմեոն Տեր-Մինասյան. մանկավարժն ու հրապարակախոսը» գրքում «Սասուն» տպարանի հիմնադրման տարեթիվ է համարում 1908 թվականը²:

Կարծում ենք, տրամաբանական է տպարանի կազմակերպման տարեթիվ ընդունել 1908 թ., որովհետև մեզ հայտնի որևէ փաստ չկա, որը հիմք կտա կասկածի տակ առնելու Տ. Սազանդարյանի վկայությունը: Մանավանդ որ հեղինակը Գորիսի անցուդարձին քաջատեղյակ անձնավորություն էր, ինչի հաստատումն է ժամանակի մամուլում քաղաքի վերաբերյալ նրա տպագրած թղթակցությունները: Տիգրան (Թեոս) Սազանդարյանը ծնվել է 1880թ. մայիսի 1-ին Խնձորեսկ գյուղում: 1896-1903 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, այնուհետև որոշ ժամանակ թիֆլիսում գտնվելուց հետո վերադարձել հայրենի Չանգեզուր, ուր հայոց լեզու և պատմություն է դասավանդել ծննդավայրում, ապա՝ Գորիս քաղաքում³: Նա ոչ միայն աչքի ընկնող ուսուցիչ էր, այլև հրապարակախոս, գրող ու հասարակական գործիչ, 1919-1921 թթ. Գորիսի ազգային խորհրդի անդամ է հանդիսացել: Նրա դուստրն էր ճանաչված երգչուհի Տաթևիկ Սազանդարյանը⁴:

Տպարանի հիմնադիրները 1902 թ. Բաքվից Գորիս տեղափոխված հրատարակչական աշխատանքի կարևորությունը գիտակցող սյունեցի երիտասարդներ էին՝ դաշնակցական Ասատուր Գևորգյանն (Խոսուն Ճատուր) ու Մեսրոպ Փարսյանն (Փարսուն Մեսրոպ): Մինչ այդ նրանք քաղաքում «Սասուն» անունով գրախանութ էին հիմնել, որը շատ արագ դարձել էր XX դարասկզբի Գորիսի հասարակական-մշակութային կենտրոնատեղին: Երիտասարդների նախածեռնությամբ ու Գորիսի քաղաքային խորհրդի անդամ Հայրապետ Մելիք-Օհանյանի նյութական օժանդակությամբ Գերմանիայից տպագրական սարքավորումներ գնվեցին և բերվեցին Գորիս⁵: Հիմք ընդունելով նույն «Ղարաբաղ» թերթում 1912 թ. Ասատուր Գևորգյանի՝ իբրև «տպարանատեր» հիշատակումը⁶ և Է. Չոհրաբյանի գրական-փաստագրական մի գրքում 1920-ականների սկզբի համար Մեսրոպ Փարսյանի մասին եղած տեղեկությունը, թե «Տպարանում Մեսրոպը և՛ վարիչ էր, և՛ գրաշար, և՛ Էջակապ ու տպագրիչ»⁷, Գ. Ստեփանյանը գրում է, որ տպարանի «գրաշարն ու տպագրիչը Մ. Փարսյանն էր»⁸:

Գորիսում տպարանի հիմնադրումը կարևոր ձեռքբերում էր: Այստեղ հրատարակված գրքերն ու պարբերականները նպաստեցին Սյունիք-Չանգեզուրի տարածաշրջանում կրթամշակութային կյանքի վերընթաց զարգացմանն ու

1 «Ղարաբաղ», Շուշի, 29 յունուարի 1912, N 8:

2 **Ստեփանյան Գ.**, Սիմեոն Տեր-Մինասյան. մանկավարժն ու հրապարակախոսը, էջ 164-165 (անտիպ):

3 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 312, ց. 2, գ. 1263, թ. 2, 19-20, 29:

4 **Չոհրաբյան Է.**, Միրզոյան Հ., Նշվ. աշխ., էջ 367, Հախվերդյան Ս., Նշվ. աշխ., էջ 198, 390:

5 **Չանգեզուրցի Ա.**, Դաշնակցութեան մուտքն ու աշխատանքը Չանգեզուրում, «Հայրենիք», Բոստոն, 1968, N 3, էջ 69-70:

6 «Ղարաբաղ», Շուշի, 29 ապրիլի 1912, N 31:

7 **Չոհրաբյան Է.**, Լեռնային լեզենդ, Երևան, 2007, էջ 142:

8 **Ստեփանյան Գ.**, Նշվ. աշխ. (անտիպ), էջ 165:

գրագիտության տարածմանը: Այս տեսակետից անգնահատելի է «Սասուն» տպարանի խաղացած դերը: Այստեղ են հրատարակվել Գորիսում լույս տեսած գրքերն ու պարբերականները, այդ թվում՝ 1909 թ. դեկտեմբերից մինչև 1910 թ. սեպտեմբեր Սիմեոն Տեր-Մինասյանի խմբագրությամբ հրատարակված «Գավառ» թերթը՝ Սյունիքի անդրանիկ պարբերականը:

Բացի զանազան ձևաթղթերի, ցուցանակների, այցետոմսերի, կազմերի, կոչ-հայտարարությունների ու գործառնական զանազան նյութերի տպագրությունից¹, Տ. Սազանդարյանի՝ վերևում հիշատակված վկայությունից կարող ենք ենթադրել, որ «Սասուն» տպարանում կարող են հրատարակված լինել ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն և թուրքերեն գրքեր: Այս առթիվ մեր պրպատումները դրական արդյունք չեն ունեցել. մեզ չի հաջողվել XX դարի առաջին երկու տասնամյակում Գորիսում թուրքերեն կամ ռուսերեն գիրք հրատարակվելու մասին տեղեկություն հայթայթել: Ուստի՝ մեր անդրադարձը վերաբերում է միայն 1909-1922 թթ. հրատարակված հայերեն գրքերին:

«Սասուն» տպարանում տպագրված մինչ այժմ հայտնի առաջին գիրքը 1909 թ. հրատարակված Տիգրան Սազանդարյանի «Կալանավորը որդեսպան» պատմվածքն է՝ 16 էջ ծավալով²: Գրքի օրինակները պահվում են Հայաստանի ազգային գրադարանում:

Ստեղծագործությունը նավաստու մասին է, որին քաղաքական հանցանքի համար կալանավորել են ու պահապանների («սվինավոր զինվորների») հսկողությամբ գնացքով տեղափոխում են քստորավայր: Նրա հետ է նաև չորսամյա տղան, քանի որ կնոջը կազակները սպանել էին և այլ հարազատներ չուներ, ում մոտ կարող էր թողնել փոքրիկին: Պատմվածքի սկզբում նկարագրվում է, թե ինչպես է հոր և իր կարգավիճակից անտեղյակ փոքրիկը կայարանում կանգնած գնացքի ճաղապատ վագոնից ցանկանում դուրս գալ: Կալանավորը մտահոգ էր որդու ապագայի համար: Նա խորհրդածում էր՝ եթե տղան իր հետ բանտարկված մնա և «սվինավոր զինվորի հսկողության տակ» մեծանա, ապա այդ պայմանները նրան «երբե՛ք ազատ մարդ չեն դարձնիլ, ազատ ոգի տալ չեն կարող, ... այլ կլինին ստորաքարշ, ցածրահոգի և ստրուկ ու զուրկ ամենահասարակ ինքնասիրությունից անգամ»³: Երեխային մանկատուն տեղափոխելը ևս նրա համար ընդունելի չէր, որովհետև այնտեղ «այնպիսի ոգով են կրթում, որից ոչ մի ապագա սպասելի չէ: Սա այնտեղ ավելի անպատիվ կոչում կունենա, ապօրեն ծնված կանվանեն և սա կլռի»⁴: Ու կալանավորի ուղեղում հրեշավոր միտք է հղանում. սպանել քնած երեխային: Պատմվածքն ավարտվում է «Հյուսիսի» քաղաքներից մեկի հարակից անտառի եզրին որդեսպան նավաստու մահապատժի նկարագրությամբ:

Ուշադրություն դարձնենք ստեղծագործության տպագրության ժամանակին. այդ օրերին «Դաշնակցության գործի» շրջանակներում տասնյակ ազգային գործիչներ էին ձերբակալվում ու ուղարկվում «Հյուսիս», որտեղ 1912 թ. տեղի ունեցավ ՀՅԴ «Մեծ դատավարությունը»: Կարծում ենք՝ հենց այս ձերբակալությունների արձագանքների հիման վրա է ստեղծվել Տ. Սազանդարյանի

1 «Գալառ», Գորիս, 29 օգոստոսի 1910, N 32:

2 **Սազանդարյան**, Կալանավորը որդեսպան (պատմվածք), Գորիս, տպ. Սասուն, 1909, 16 էջ:

3 Նույն տեղում, էջ 9:

4 Նույն տեղում, էջ 10:

«Կալանավորը որդեսպան» պատմվածքը: Այն կարծես ի ցույց է դնում, թե ինչպիսի անձնական, ընտանեկան ու մարդկային ողբերգությունների էր հանգեցնում ցարական բռնապետությունը:

1909թ. դեկտեմբերին Գորիսում պարբերական մամուլի սկզբնավորումը խոստանում էր նպաստավոր հանգամանք հանդիսանալ ոչ միայն Չանգեզուրի գավառի հասարակական-մշակութային կյանքի ակտիվացման, այլև տպարանի հրատարակած գրքերի վաճառքը կազմակերպելու տեսակետից: Վստահաբար կարող ենք պնդել, որ ամենևին պատահական չէ, որ Գորիսում միաժամանակ է սկզբնավորվել գրահրատարակչությունն ու մամուլը: Այն հասարակական պահանջ էր: Այսպես՝ «Գավառ» թերթի 1910թ. հունվարի 1-ի և 17-ի համարներում հայտարարություն էր տպագրված Տ. Սազանդարյանի «Պատկերներ. Չանգեզուրի թուրք-հայ ընդհարումներից առած» (Թիֆլիս, 1907) և «Կալանավորը որդեսպան» գրքերի վաճառքի մասին: Ցանկացողները կարող էին ձեռք բերել անձամբ հեղինակից, «Սասուն» գրախանութից կամ Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրախանութից¹:

Հաջորդ տարի՝ 1910 թ., «Սասուն» տպարանում հրատարակվեց երկրորդ գիրքը՝ Եղիա Տեր-Հայրապետյանի «Չանգ-Է-Չուր: Լեգենդական պոեմ»-ը²: «Գավառ» թերթի 1910թ. մայիսի 23-ի և հուլիսի 4-ի համարներում տպագրված հայտարարություններից ընթերցողն իրագեկվում էր. «Մամուլի տակ է և շուտով լույս կտեսնի Եղիա Տեր-Հայրապետյանի «Չանգ-Է-Չուր» լեգենդական պոեմը»³: Իսկ թերթի օգոստոսի 8-ի համարից տեղեկանում ենք, որ գիրքն արդեն հրատարակվել և վաճառվում է «Սասուն» գրախանութում⁴:

Գրքի տիտղոսաթերթի վրա առկա բանաստեղծական հատվածում ներկայացված է երկրամասի անվան ծագման ժողովրդական ավանդությունը. «... Համր Չանգը ձյունափայլ / Բարձունքներից խորտակվեց / Անդունդները մե՛զ, մռայլ, / Փշու՛ր-փշու՛ր բեկբեկվեց / Որպես պնակ ապակյա, / Հեկեկալով - զը՛ն-զը՛ գո՛ւր... / - Ինչի և են շրջակա / Աշխարհն ասվեց «ՉԱՆԳ-Է-ՉՈՒՐ»:

Հետաքրքրությամբ, մեկ շնչով ընթերցվող ստեղծագործությունում բանաստեղծը նկարագրում է անցած դարերի ընթացքում Սյունիք աշխարհի գլխով անցած ուրախ ու տխուր իրադարձությունները: Նա ջերմ սիրով ու երկյուղածությամբ գովերգում է հայրենի երկրամասի բնությունը, սարերը, ձորերը, թփերն ու ծաղիկները, անգամ վայրի կենդանիներին: Այս առումով բնորոշ օրինակ է պոեմի «Չանգը» ենթախորագրով հատվածի առաջին քառատողը («Իմ հայրենի Սյունիքն ունի / Գեղ ու բնույթն Եդեմա / Իմ հայրենի Սյունիքն ունի / Հուշ ու հեքիաթն Ադամա»): Փոխարենը նա արգահատանքով է նկարագրում Հայոց Աշխարհը հրի ու սրի մատնած Լենկ Թեմուրի ծնունդն ու դաժան գործերը: Ե. Տեր-Հայրապետյանի ստեղծագործության որոշ հատվածներ «դուր չեն եկել» ցարական գրաքննիչներին: Հրատարակված տարբերակից հանված տողերը գրքում բազմակետերով են նշված⁵: Գրքի վերջում նշված է հեղինակի՝

1 «Գավառ», Գորիս, 1, 17 յունուարի 1910, N 1, 3:

2 **Տեր-Հայրապետյան Ե.**, Չանգ-Է-Չուր: Լեգենդական պոեմ, Գորիս, տպ. Սասուն, 1910, 63 չի. էջ:

3 «Գավառ», Գորիս, 23 մայիսի, 4 յուլիսի 1910, N 20, 25:

4 Նույն տեղում, 8 օգոստոսի 1910, N 29:

5 **Տեր-Հայրապետյան Ե.**, նշվ. աշխ., էջ 51, 53, 59, 61:

հրատարակության պատրաստ ստեղծագործությունները՝ «Աղան և աղախի-
նը», «Ակամա արյունը», «Իլան-Դադի», «Բախչասարայի շատրվանը Պուշկի-
նի» պոեմները, «Ուսանավորներ»-ի Ա և Բ պրակները: Նշենք, որ 5 տարի անց՝
1915 թ., Բաքվում հրատարակվել է Ե. Տեր-Հայրապետյանի «Օդանավորդի տե-
սիլները» պոեմը¹:

Հայտնի է, որ 1912 թ. հայությունը մեծ շուքով նշեց հայկական տպագրու-
թյան 400-ամյակը: Հոբելյանին էր նվիրված նույն տարում Գորիսի տպարանում
հրատարակված «Նոր Քնար» երգարանը², որը կազմել էր մեզ արդեն ծանոթ
Տիգրան Սազանդարյանը: Երգարանում տեղ էին գտել տարիների ընթացքում
Արարատյան դաշտի գյուղերում ու Անդրկովկասի այլ վայրերում ուսուցիչնե-
րից, ուխտավորներից ու աշուղներից նրա հավաքած շուրջ 300 երգից 148-
ը: Դրանց հիմնական մասն ընտրվել էր հրատարակված երգարաններից, մի
մասն էլ առաջին անգամ էր տպագրվում: Երկար ստեղծագործություններից
որոշները կրճատումներով են տպագրված: Տ. Սազանդարյանն առաջաբանում
շեշտում է, որ իր առջև խնդիր է դրել երգարանում ներառել գավառի երեխա-
ներին հոգեհարազատ երգեր, «որոնք տարիներ շարունակ երգվել և երգվում
են ժողովրդի լայն խավերում և ունեն մեծ կիրառություն»³: Հրատարակված
երգերից 28-ը մանկական էին, 19-ը՝ պարերգեր, 68-ը՝ ժողովրդական և այլ եր-
գեր, 33-ը՝ ազգային-հայրենասիրական երգեր: Դրանց թվում էին՝ Գամառ-Քա-
թիպայի «Արաքսի արտասուքը», «Նոր տարի», Րաֆֆու «Ճովակի եգերքին»,
Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը», Ն. Ռուսիկյանի «Կիլիկիա» և այլ
ստեղծագործություններ: Գրքի վաճառքից գոյացած եկամտի 10 %-ը հատկաց-
վելու էր Հայ դպրոցական ուսուցչության ֆոնդին:

Ի դեպ, Ս. Հախվերդյանի վերը հիշատակված գրքում բառացի նշված է.
«Գորիսի բնակիչ Ս. Մաշուրյանի մոտ պահվում է 1921 թ. «Սասուն» տպարա-
նի հրատարակված մի գիրք՝ «Նոր քնար» վերնագրով: Գրքույկի խմբագիր-հրա-
տարակիչն է եղել ուսուցիչ Տ. Սազանդարյանը: Դպրոցական երգարանը հրա-
տարակվել է հայ տպագրության 400-ամյակի առթիվ: Գիրքն արժեր 30 կոպեկ:
Հետաքրքիր է, որ գրքի վաճառքից ստացված եկամտի 10 %-ը, ինչպես նշված է
տիտղոսաթերթին. «նվիրվում է Գորիսի հայ ուսուցչության ֆոնդին»⁴: Ի դեպ,
նման տեղեկություն կա նաև վերը հիշատակված «Գորիսի հանրագիտարան»
գրքում, որտեղ ևս 1912 թվականի փոխարեն երգարանի հրատարակության
տարեթիվ է նշված 1921 թ.⁵: «Հայ գրքի» ցանկերում 1921 թ. Տ. Սազանդարյանի
երգարանի վերահրատարակման մասին հիշատակություն չկա⁶, այլ աղբյուր-
ներից մեզ նման հրատարակության մասին տեղեկություն հայտնի չէ: Բացի
այդ, Ս. Հախվերդյանի նկարագրությունն ամբողջովին վերաբերում է 1912 թ.
հրատարակությանը: Ուստի՝ ամենայն հավանականությամբ խոսքը միևնույն

1 **Տեր-Հայրապետյան Ե.**, Օդանավորդի տեսիլները = Видѣнія летчика: Պոեմ, Բագու, տպ.
Ն. Երեանցեանի, 1915, 32 էջ:

2 «Նոր Քնար» (Դպրոցական երգարան), կազմեց՝ Սազանդարեան: Նւեր հայ տպագրութեան
400-ամեակին, Գորիս, տպ. Սասուն, 1912, 112 էջ:

3 Նույն տեղում, էջ 3-4:

4 **Հախվերդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 201:

5 **Չոհրաբեյան Է.**, Միրզոյան Հ. Ա., Գորիսի հանրագիտարան, էջ 367:

6 Հայ գիրքը 1900-1920 թվականներին, կազմողներ՝ **Օ. Գյուլումյան, Ա. Աղայան** և
նրիշներ, Երևան, 2007:

գրքի մասին է (բացառված չէ, որ հիշատակված օրինակի տիտղոսաթերթին վրիպակ լինի): Նաև դժվար է հավատալ, որ 1921 թ. խառնակ օրերին Սյունիքում երգարան վերահրատարակվեր:

«Սասուն» տպարանում հրատարակված հաջորդ գիրքը ծնունդով շուշեցի բանաստեղծ, մանկավարժ, հետագայում ԽՍՀՄ գրողների միության անդամ Հակոբ Խանլարյանի «Բանաստեղծություններ»-ի առաջին պրակն է՝ հրատարակված 1916 թ.¹: Այն ներածական տեքստ կամ վերջաբան չունի: Ժողովածուում ընդգրկված է 9 տասնյակ բանաստեղծություն: Գերակշիռ մասը կարճ, անվերնագիր ստեղծագործություններ են: Հ.Խանլարյանն իր ստեղծագործություններում գովերգում է բնությունը, սերը, մարդկային ջերմ հարաբերությունները: Որոշ ստեղծագործություններ թախծոտ բովանդակություն ունեն, կան անպատասխան սիրո թեմայով բանաստեղծություններ: Ժողովածուում քաղաքական բնույթի ստեղծագործություններ չկան:

Մեզ հայտնի հաջորդ երեք գրքերը Գորիսում հրատարակվել են 5 տարի անց՝ 1921 թվականի առաջին կեսին: Դրանք 1919-1921 թթ. Սյունիքում Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ տեղի ունեցած ազատագրական պայքարի ուսումնասիրման համար կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն: Տրամաբանական է կարծել, որ հրատարակվելուց առաջ այդ գրքերը խմբագրվել են Գ. Նժդեհի կողմից:

«Խուստուկյան կանչեր» գրքույկում ամփոփված է Կապան-Գենվագ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար Գարեգին Նժդեհի հրամանները, կոչերը՝ ուղղված իր զինվորներին: Հրատարակված առաջին հրամանը, որը թվագրվում է 1919 թ. հոկտեմբերի 23-ով, ընդունվել է Լիճկում: Հաջորդ հրամանները թվագրվում են 1919 թ. նոյեմբերի 30-ով, 1920 թ. հունվարի 17-ով, փետրվարի 12-ով, հունիսի 13-ով²: Այնուհետև հրատարակված են 1920 թ. սեպտեմբերի 12-ին, 15-ին, 17-ին, հոկտեմբերի 5-ին Խուստուկի լեռան լանջերից կապանցիներին ուղղված Նժդեհի կոչերը, ուր զորավարը բնակչությանը հորդորում էր պայքարի դուրս գալ շրջանը ռազմակալած բոլշևիկյան ուժերի դեմ³: Չափազանց հետաքրքիր են տպագրված «յոթ պատվիրաններ»-ը, որոնք Նժդեհն ուղղել է իր զինվորներին: Դրանցից վերջինը («Ճապոնական կայսրի խոսքերը»)՝ իբրև նախաբան, բերված է նաև գրքի սկզբում⁴: Գրքույկը եզրափակվում է «Գ. Նայիրյան» ստորագրությամբ հեղինակի կողմից 1921 թ. փետրվարի 8-ին Գորիսում գրած «Երկու խոսք»-ով, ուր բացահայտված է նշյալ հրամանների ու կոչերի հրատարակության նպատակը: Ինչպես հեղինակն է շեշտում, դրանք «բացի պատմական, անգամ գեղարվեստական լինելուց, ներկա օրերի համար մեկ-մեկ բարոյական խթաններ են դեռ մարտնչող Սյունիքի համար»: Նրա համոզմամբ՝ Նժդեհի կոչերն ու պատգամները ցույց են տալիս, որ ժողովուրդը կարող է դավաճանել իր առաջնորդին, սակայն վերջինը չի կարող նման քայլի դիմել, այլ պետք է անմնացորդ սիրի ու հավատա ժողովրդին, «կա՛մ հաղթանակի, կա՛մ մեռնի, փախուստի ոչ մի արահետ չպետք է փնտրի»:

1 **Խանլարեան Զ.**, Բանաստեղծություններ: Առաջին պրակ, Գորիս, տպ. «Սասուն», 1916, 98 էջ:

2 **Նժդեհ**, Խուստուկյան կանչեր, Գորիս, տպ. Սասուն, 1921, էջ 5-12:

3 Նույն տեղում, էջ 13-20:

4 Նույն տեղում, էջ 3:

Եվ այդ հրամանները լույս են տեսնում իբրև դաստիարակչական նշանակություն ունեցող հանգամանք՝ «ապրող ու մարտնչող ներկա սերնդի և որպես ռազմաբարոյական օրենսդրություն գալիք օրերի համար»¹:

Հաջորդ գիրքը, որը հրատարակվել է Ինքնավար Սյունիքի խորհրդարանի կողմից, կրում է «Ազատ Սյունիք. Սև էջեր և փաստեր բուլճարիկների հնգամյա գործունեությունից» խորագիրը²: Այն կազմել ու հրատարակության էր պատրաստել Տիգրան Սազանդարյանը: Գիրքը սկսվում է «Երկու խոսք»-ով, որին հաջորդում է իր հեղինակած Ինքնավար Սյունիքի հիմնը: Այնուհետև փաստեր են բերվում 1920 թ. հուլիս-նոյեմբերին բուլճարիկների կողմից Սյունիքի հիմնական մասը ռազմակալելու ընթացքում երկրամասի հայ բնակչության նկատմամբ գործադրված դաժանությունների, հալածանքների, թալանի, սպանությունների մասին: Տպագրված է Կոռնիձոր և Տեղ գյուղերի բնակիչների համախոսականները՝ իրենց պատճառված վնասների վերաբերյալ: Հետո նկարագրվում է հակաբուլճարյան ապստամբությունը և Չանգեզուրի արևմտյան մասից բուլճարիկների արտաքսումը: Վերջում հրատարակված են 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում գումարված Համազանգեզուրյան առաջին համագումարի ընդունած որոշումները: Ի դեպ, գրքի վաճառքից գոյացած եկամուտը հատկացվելու էր երկրամասի ազատության համար նահատակված հայորդիների եղբայրական գերեզմանի վրա հուշարձան կանգնեցնելու գործին:

Հրատարակված հաջորդ գիրքը կրում է «Արևոտ գիրք. Պատմական համառոտ տեսություն բուլճարիկյան սխրագործության Չանգեզուրում, Սիսիանում և Ղափանում: Ապստամբական շարժում: Փաստաթղթեր» խորագիրը³: Այն կազմել և հրատարակության էր պատրաստել Գ. Նժդեհի զինակիցներից Ասլան Շահնազարյանը, որ գիտակցում էր երկրամասում ծավալվող իրադարձությունների պամությունը գրավոր կերպով գալիք սերունդներին թողնելու կարևորությունը⁴: Գրքի շապիկի վրա նշված է, որ հրատարակվում է Լեռնահայաստանի կառավարության կողմից, այն է՝ տպագրվել է 1921 թ. ապրիլի 27-ին Ինքնավար Սյունիքը Լեռնահայաստան անվանափոխելու և հունիսի 1-ին Լեռնահայաստանը Հայաստան վերանվանելու միջակայքում: Սա Գորիսում հրատարակված վերջին գիրքն է, որի վրա առկա է «Սասուն» տպարանի հիշատակումը: Այն նաև տպարանի ամենածավալուն երկու գրքից մեկն է (մյուսը Տ. Սազանդարյանի երգարանն է): Նման խոսուն վերնագիրն արդեն պատկերացում է տալիս գրքի բովանդակության մասին: Գրքի առաջին բաժնում մանրամասն նկարագրված է 1920 թ. հուլիս-նոյեմբերին Սյունիքում բուլճարիկների իրականացրած դաժանությունները, երկրորդում՝ հակաբուլճարյան ապստամբության ընթացքը, ժողովրդի ոգևորությունն ու միակամությունը և դրա արդյունքում արձանագրված հաջողությունը, երրորդում հրատարակված են ինչպես Չանգեզուրում գործող խորհրդային զորքերի հրամանատարության հրամաններն ու կարգադրությունները (որոնք ապստամբ սյունեցիների

1 Նույն տեղում, էջ 23-25:

2 Ազատ Սիսիան. Սև էջեր և փաստեր բուլճարիկների հնգամյա գործունեությունից, Գորիս, տպ. Սասուն, 1921, 60 էջ:

3 Արևոտ գիրք. Պատմական համառոտ տեսություն բուլճարիկյան սխրագործության Չանգեզուրում, Սիսիանում և Ղափանում: Ապստամբական շարժում: Փաստաթղթեր, Գորիս, տպ. Սասուն, 1921, III, 112 էջ:

4 **Գեորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Պուքրեշ, 1923, էջ 171:

ծեռքն էին անցել), այնպես էլ խորհրդային հրամանատարության և Գ. Նժդեհի միջև իրականացված նամակագրությունը: Նշյալ փաստաթղթերը թվագրվում են 1920 թ. նոյեմբեր - 1921 թ. փետրվարով:

Արձանագրենք, որ 1921 թ. «Սասուն» տպարանում հրատարակված երեք գրքերը ոչ միայն Սյունիքի 1919-1921 թթ. հերոսամարտի ուսումնասիրման ուշագրավ աղբյուրներ են, այլև ունեն ռազմահայրենասիրական նշանակություն և այդ տեսակետից միանգամայն արդիական են նաև մեր օրերում: Ուստի՝ ուրախալի է, որ դրանք անկախ Հայաստանում վերահրատարակվել են¹:

1921 թ. հուլիսին Չանգեզուրի խորհրդայնացումից հետո պետականացվեց ու անվանափոխվեց նաև «Սասուն» տպարանը: Այն սկսեց ծառայել Չանգեզուրի հեղկոմի, ապա՝ գավգործկոմի ու ՀԿ(Բ)Կ Չանգեզուրի գավկոմի կարիքներին՝ առանձնապես տեղական պարբերականների, կոչերի ու գործավարական նյութերի հրատարակման նպատակով: Տպարանի հիմնադիր Ասատուր Գևորգյանը (Խոսունց) տեղափոխվեց Միջին Ասիա²:

Չանգեզուրի խորհրդայնացման մեկամյակի առթիվ 1922 թ. Գորիսում հրատարակվեց ՀԿ(Բ)Կ Չանգեզուրի գավկոմի քարտուղար Մնացական Թավաքայանի «Ազատագրված Չանգեզուր» գրքույկը³, ուր գովերգվում էր նախորդ մեկ տարում Չանգեզուրի գավառում խորհրդային իշխանությունների իրականացրած ձեռնարկումները: Գրքի վրա տպարանի հիշատակություն չկա, սակայն հստակ է, որ այն տպագրվել է նախկին «Սասուն» տպարանում, քանի որ Գորիսում պարզապես այլ տպարան չկար: Մ. Թավաքայանի գրքույկն առաջին հերթին միտված էր դաշնակցականների գաղափարաքարոզչական պայքարին հակահարված տալուն: Բացի վերը նշվածներից, 1920-ականներին Գորիսում հրատարակված այլ գրքերի մասին մեզ տեղեկություն հայտնի չէ:

Համառոտ անդրադառնալով «Սասուն» տպարանում հրատարակված գրքերի տպագրական որակին, արտաքին տեսքին ու արժեքին, արձանագրենք, որ հրատարակված բոլոր 8 գրքերը բարակ կազմով են: Առաջին 4 գիրքը տպագրվել է ժամանակի համար բարձրորակ թղթի վրա, դրանք որակյալ տպագրություններ են: Հաջորդ գրքերը վատորակ, փայտի մեծ քանակություն պարունակող թղթով են տպագրվել: Սա բացատրվում է որակյալ թղթի ու տպագրական պարագաների բացակայությամբ: 1921 թ. գարնանը հրատարակված «Արևոտ գրքի» վերջին էջում ուղղակի նշված է այս մասին: Ի դեպ, «Ազատ Սյունիք» գրքույկի՝ Հայաստանի ազգային գրադարանում պահվող երկու օրինակից մեկը հրատարակված է նախկինից մնացած որակյալ, իսկ մյուսը՝ վատորակ թղթով: Հրատարակությունները զարդանախշերով չեն առանձնանում: Կարելի է ասել՝ միակ բացառությունը «Նոր քնար» երգարանն է, որի ենթաբաժինները սկսվում են գրեթե միանման զարդանախշերով:

«Սասուն» տպարանում հրատարակված գրքերի գինը համարժեք էր Անդրկովկասի այդ տարիների այլ (այդ թվում՝ Թիֆլիսի) հրատարակությունների արժեքին: Գորիսում տպագրված գրքերը գրավաճառային շուկայում միջին

1 Ազատ Սյունիք: Արևոտ գիրք, կազմող և խմբագիր՝ Ա. Հարությունյան, Երևան, 2007, **Նժդեհ Գ.**, Հիշիր պատերազմը: Խուստուփյան կանչեր, Երևան, 2017:

2 Չանգեզուրի հերոսամարտի հերոս Խաչատուր Մալինցյան, կազմող՝ **Սիմոնյան Ա.**, Երևան, 2014, էջ 42:

3 **Թավաքայան Մ.**, Ազատագրուած Չանգեզուր, Գորիս, 1922, 17 էջ:

գին ունեին: Այսպես՝ Տ. Սազանդարյանի «Կալանավորը որդեսպան»-ն արժեր 5 կոպեկ, Ե. Տեր-Հայրապետյանի «Չանգ-Է-գուր»-ը՝ 30 կոպեկ, Տ. Սազանդարյանի «Նոր Քնար» երգարանը՝ 30 կոպեկ, Հ. Խանլարյանի «Բանաստեղծություններ»-ը՝ 50 կոպեկ, «Ազատ Սյունիք»-ը (բարձրորակ թղթով տարբերակը)՝ 5000 ռուբլի (ՀՀ դրամով), Մ. Թավաքալյանի «Ազատագրված Չանգեգուր»-ը՝ 5 կոպեկ (խորհրդային դրամով): «Խուստուռայան կանչեր»-ի և «Արևոտ գրքի» համար գին նշված չէ:

Գործում տպագրված գրքերից որոշները վաճառվել են ոչ միայն Չանգեգուրում, այլև Թիֆլիսում: Կարելի է ենթադրել, որ դրանք տարածվել են ողջ Անդրկովկասի տարածքում: Այսպես՝ Տ. Սազանդարյանի «Նոր Քնար» երգարանի կազմի վրա նշված է, որ վաճառվում է Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրախանութում, գրապահեստը գտնվում էր Գորիսի «Սասուն» գրախանութում: Հ. Խանլարյանի գիրքը վաճառվում էր Թիֆլիսի «Գիր» և «Գուտտենբերգ» գրախանութներում: 1921 թ. հրատարակված գրքերը հրատարակվելուց հետո տարածման փոքր տարածք են ունեցել, սակայն հետագայում Գ. Նժդեհի ու զինակիցների կողմից արտասահման են տարվել: Ինչ վերաբերում է Մ. Թավաքալյանի գրքույկին, ապա այն առաջին հերթին նախատեսված էր տեղային տարածման համար, փոքր տպաքանակով էր տպվել, այդ պատճառով այս գրքույկից միայն մեկ օրինակ է մեզ հայտնի:

Հուսով ենք, որ սույն հոդվածը, բացի Գործում հրատարակված գրքերը համակարգված ներկայացնելուց, կնպաստի «Սասուն» տպարանում հրատարակված մինչ այժմ անհայտ գրքերի ի հայտ գալուն, որոնք կարող են պահպանված լինել երկրամասի գրքասեր բնակիչների անձնական-ընտանեկան գրադարաններում:

HAMO SUKIASYAN - BOOK PUBLISHING ACTIVITIES OF THE «SASUN» PRINTING HOUSE IN GORIS (1909-1922)

- In 1908 the «Sasun» printing house was established in Goris, which was an important achievement for the region's population. At the beginning various forms, signboards, posters, call-statements and various operational materials, then books and periodicals were published in the printing house. 8 books published in the «Sasun» printing house in 1909-1922 are analyzed in this article. They are fiction books (stories, poems, verses), a songbook, documents, testimonies and analyzes on the military-political, economic situation of Syunik Autonomous Region. Particularly 3 books published in 1921, are valuable source for studying the liberation struggle in Syunik led by Garegin Nzhdeh.

Books and periodicals published in Goris contributed to the advancement of cultural and educational life in Syunik-Zangezur region. From this point of view the «Sasun» printing house had an invaluable role.

Key words: Printing house, book, periodicals, story, poem, Garegin Nzhdeh, Syunik, Goris, «Sasun».

АМО СУКИАСЯН - КНИГОИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГОРИССКОЙ ТИПОГРАФИИ «САСУН»(1909-1922гг.) - Создание типографии «Сасун» в 1908 г. в Горисе было важным приобретением для жителей региона. В типографии вначале издавались разнообразные формы, вывески, визитки, призывы-объявления и разные практические материалы, а в последующем: книги и периодика. В статье анализируются 8 книг изданные типографией «Сасун» за 1909-1922 гг. Это художественное творчество (рассказы, поэмы, стихи), песенники, документы, свидетельства и аналитика отражающее военно-политическое, экономическое положения автономного Сюника. В частности 3 книги изданные в 1921 г. являются ценными источниками по изучению возглавляемой Гарегином Нжде освободительной борьбы в Сюнике. Изданные в Горисе книги и периодика способствовали восходящему развитию образовательно-культурной жизни и распространению грамотности в Сюник-Зангезурском регионе. С этой точки зрения неоценимую роль сыграло типография «Сасун».

Ключевые слово: Типография, книга, периодика, рассказ, поэма, Сюник, Горис, Гарегин Нжде, «Сасун».